

սրբոցն<sup>1</sup>, բարձրագոյն բարբառով ի փառատրութիւն<sup>2</sup> դառնայ, եթէ՝ *Շնորհք<sup>3</sup> Աստուծոյ, որ յամենայնի հռչակ հարկանէ զմենջ ի Քրիստոս եւ զհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեւք<sup>4</sup> յամենայն տեղիս<sup>ա</sup>: 25* Ի վերայ այնորիկ ապա եւ զհամարձակագոյնն<sup>5</sup> բերե, թէ՝ *ն՞ կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյք, եւ զայս աւճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն՝ զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զբաշութիւնս: 26* Տեսանել զոմանց ի սուրբ Աւետարանին եւ զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ. եւ իցեն որ ի Կաթուղիկէս<sup>6</sup> առաքելոցն առաւելագոյնս ճանաչին:

27 Այլ Սրբոյն Պաւղոսի<sup>7</sup> չորեքտասանեքումք թղթովք պատմե զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս, եւ ուրախակիցս<sup>8</sup> իւր առնէ, եւ<sup>9</sup> ի վախճանի թղթոցն<sup>10</sup> ըստ իւրաքանչիւր ումեք յողջոյն<sup>11</sup> կատարեալ՝ յանուանէ հարցանէ. եւ զուրումն<sup>12</sup> յԱւետարանէ անտի նշանակե զգովութիւնսն<sup>13</sup>: 28 Բայց ո՛չ միայն զերանելոյն<sup>14</sup> զաւզնականութիւնսն<sup>15</sup> յարգէ, այլ եւ զքրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ, վասն որոյ եւ յաղաչանս առ Աստուած մատուցեալ<sup>16</sup>՝ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ: 29 Եւ ամենայն եկեղեցեաւք<sup>17</sup> հնչեցուցանէ զընտրելոցն զազնուականութիւն, ոչ միայն զարանցն, այլեւ զկանանցն աշակերտելոց<sup>18</sup>, որ զճմարտութիւնսն Աւետարանէն:

1 c սուրբսն

2 b ի փառատրութիւնսն / *deu* ի փառատրութիւն

3 *bc* շնորհքս

4 *bcd* միօք

ա Բ Կոր. Բ 14

5 *bc* համարձակագոյն

բ Զոմմ. Ը 33

6 *bc* կաթուղիկէ

7 c Պողոս

8 *bcd* նիզակակիցս գործակիցս / [*u* զգործակիցս] եւ ուրախակիցս

9 *b* չիք եւ

10 *b* թղթոյն

11 c ողջոյն

12 *bc* զորումն

13 *bc* զգովութիւնսն

14 *e* զերանելոյն

15 *bcd* զօզնականութիւնսն

16 c մատուցանել

17 *b* եկեղեցօք

18 *bc* աշակերտելոցն / *deu* պարկեշտելոց *փիս*. աշակերտելոց